կերպով հարստահարում են խեղճ գիւղացիութեանը. նրանք շիկացած երկաթով դաղում են գիւղացիների ձեռքերն ու ոտները, ծեծում և փող առնում, ապա նրանք իրենց գազանութիւնների մէջ այնքան առաջ են գնում, որ նոյնիսկ չեն խնայում կանանց, տասը գեղջկուհու ծեծում են և նրանցից շատերի թևերը վնասում.

Վարժապետ ջան,—դարձաւ ինձ մի կին,—այս թևս է, որ Հրացանի զօնդաղով վնասեցին. դեռ ցաւը (վէրքը) վրան է, տես. և նա ցոյց տուեց ինձ վէրքոտ թևը։

Այս նկարագրութիւնից յետոյ, թէ ինչ դրութեան մէջ է ապրում այստեղի խեղճ գիւղացիութիւնը, այդ թողնում եմ սիրելիս Քո ըմբռնողութեանը։

Շահրուլաղից 15 բոպէ հեռու, մի սարի լանջին գըտնւում է երկար, քառակուսի մի քար, նրա միջից բղխում է սառնորակ և զուլալ ջուր, որը կազմում է այդ գիւղի զարդը. աւանդութիւնն ասում է, թէ Ս. Սարգսի ձիու ոտքը զարկւել և ջուր է դուրս եկել. այժմ այդ վայրը դարձել է ուխտատեղի։ Համբարձմանը Փէրիայի զանազան գիւղերից հայերն ուխտի են գալիս, մոմ վառում, մատաղ կտրում և մինչև երեկոյ ուրախանալուց յետոյ վերադառնում են գիւղ։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	100
2	Ջունոր	50
3	Միջակ	50
4	Ունևոր	40
5	Հարուստ	—
	Ընդամենը	240

ԽՈՒՆԿ

—

Շահրուլաղից դէպի արևմուտք, քառորդ ֆարսախ հեռաւորութեան վրայ ընկած է հայաբնակ Խունկ գիւղը. սա դիրքով մասամբ դաշտային է և մասամբ բլրային փոքրիկ